ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆարսկաստանի համար տարեկան 5 Ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. Թղթդրմ. Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 Ֆր., վեցամսեայն 10 Ֆրանգ և եռամսեայն 5 Ֆրանգ։

Բաժնեգինները կանխիկ կը վճարուին և ծնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ը ՏԱՐԻ ԹԻԻ 14

1892 ՀՈԿՏԵՄԲԵՐ 5

ՍԵՊՏԵՄԲԵՐ 23 (Հ. Տ.)

ԶՈՐԵԳՐՈՒԹԻՒՆ

կը հրատարակուի ամեն երեք. օրեր

ԳԱՅՏԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Շարունակ. կամնախագիծէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մացուցանելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իր նպատակ իրագործելու համար իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին այժ գոյացնել Ազգին մէջ իր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իբրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցի կամ թղթակցի ազգանունները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատակ Արմենիա լրագրի հրատարակիանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեսնենք կարելի՞ է. — Վեհ. Խրիմեան Հայրիկ. — Կովկասի հայ դպրոցները եւ ռուս կառավարութիւնը. — Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան. — Պարսկահնդկական բեմի Հայերի առաջնորդական նիւթ վիճերը. — Բանաձեւից ի Կ. Պոլիս. — Բէյրայի Հայոց բարոնի այրուիլը. — Մր ձայ զիմուոր ի Թոնքին. — Հայեր Յուներիկա. — Գաղթականութեան արգելքը. — Պարսկաստանի մեր բաժնորդներին. — Ռուսիա եւ Բ. Դուռը. — Պուլկարիան 1891ին. — Ֆրանսական լուրեր. — Եգիպտոսի խնդիրը. — Բօլբա. — Բօլբայի պատուաստը. — Յանուցումներ. — Բանասիրական (վանցիների անուանքներ. — Բառարան վանի բարբառին).

ՏԵՍՆԵՆՔ ԿԱՐԵԼի՞ Է

Մեզմէնէ ոմանք, ներանք որ, Հայկեանական ներկայ խնդրին վրա մտիկ են տալիս միայն երեսէ, կողքերէ և նա էլ շատ հեռուէ, ազատ և ազատ հոլ երկիրներէ, չուզելով ոչ մեռ գալ և ոչ էլ օ՛եւիցէ մի զոհողութիւն անել, այսպէս են մտածում և այսպէս են խորհուրդ տալիս, թէ պէտք է որ մենք Հայաստանում բնակուող մուսուլմանի տարրի, Քրդերի և Թրքերի հետ հաշտուենք, միանանք և ապա սկսենք գործել, և ապա սպասել որ կարող պիտի լինենք հասնել մեր նպատակին։ Եւ մինչեւ անգամ ոմանք պնդում էլ են թէ կարելի է այդպէս անել։ Տեսնենք կարելի է՞։

Մի դար կամ կէս դար առաջ, կարելի էր Հայաստանում բնակուող մուսուլման տարրի հետ, աւելի Քրդերի հետ, ոչ թէ միայն հաշտուել և միանալ, այլ նաեւ մինչեւ անգամ նրանց դարձնել և մեծացունել Լուսաւորչական եկեղեցւոյն, եթէ, եթէ՛ մեր հոգեւորականները զբաղուած չը լինէին միայն Կ. Պոլսի, Սմիռնայի և Մ. Էջմիածնի պատրիարքական և կաթողիկոսական աթոռների տիրապետութեան հարցով, և միայն այդ աթոռների տիրապետութեամբ բաւականանալով չչանային և չմրափէին մինչեւ այսօր։ Կարելի էր այն օր, երբ Շաքիր փաշաները երկիրը խաղաղեցնելու պատրուակով Հայաստանում բնակուող մեր համաբիւն, քրիստոնեայ, քաջ եղբայրներին բանի թլփատում էին և քուրդ անունով մկրտում։ Արդեօ՛ք քանի՛ քանի՛ հազարաւոր Հայ ընտանիքներ օսմանեան խորամանկ քաղաքականութիւնը այդպիսով միացրեց մուսուլման տարրի հետ։ Հէնց այդ ժամանակի համար էր որ Մարդարէն կանչում էր.

«Ուտելու եկէ՛ք, դաշտի գազանները
Դիշատէ՛ք հօտը, անասուն պայլերը,
Ձի հովիւները կոյր են ու տխմար ...»

Անցածը անց է կացել. հիմա ներկայի համար մտածենք. տեսնենք կարելի՞ է մուսուլման տարրի հետ հաշտուել։

Նախ, ի՞նչ է պատճառը որ մենք դժում ենք այսօր թէ լաւ կը լինէր եթէ Քրդերը մեզ հետ հաշտուէին, միանային։ Քրդերը ո՛չ քաղաքակրթուել և ոչ էլ միացել մի մարմին դարձած ազգ են և ոչ էլ հարստութիւն ունեն. ուրեմն ինչո՞ւ ցանկանում ենք այսպիսի մի խուժան ազգի հետ հաշտ և միաբան լինել։ — Որովհետեւ զէնք ունեն, այժ ունեն, որով կարողանում են անել ինչ որ ուզում են և միայն այդ զէնքով ազատ ապրում են։ Երբ այդպէս է, մեր կողմից խոհեմութիւն չէ եթէ չաշխատենք քուրդ տարրի հետ հաշտ և միաբան լինել. բայց տեսնենք արդեօք քուրդ տարրն էլ ուզո՞ւմ է մեզ հետ այնպէս լինել ինչպէս մենք ուզում ենք իրենց հետ լինել, թէ ոչ։

Ինչո՞ւ համար պիտի ուզէ մեզ հետ հաշտ և միաբան լինել քուրդ տարրը։

Երբ նա իր մանկական օրօրոցից սկսում է Հային կռվուր, Աստուծոյ թշնամի ճանաչել. վախկոտ և

ԲԱՌԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՆՑԻՆԵՐԻ ԱՆԼՈՒՆԵՐ

Գոռբագոռ(1) էլնի(2) քո եօթ խէր (3)։ Քո ումուդ(4) խորեմ, խեղդուած (կամ) սեւաւոր (5)։ Ժաւռ կուճոպաժռ (6), մրմնաւոր (7)։ Քո պատանք կարեմ։ Թաժա (8) մեռել անեմ քեզ։ Աւալ թաւալամեռ (9)։ Քո խող (10) վեր (11) քո կոպին (12)։ Խող վեր չաշիդ (13)։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Այս անէծքներ վանցիների համեմատ հնչելու համար պէտք է նկատի առնել այս մասին Արմենիայի Թիւ 10ի Բանասիրականին մէջ գրուածներն որոց համեմատ պէտք է կարդալ այս բառ «կիռոպակիռո էլնի» որ կը նշանակէ «գերեզմանէ գերեզման փոխադրուի»։ (2) Լինի։ (3) Հայր։ (4) Ծոյս։ (5) Խեղդուած արական սեռի համար կը գործածուի. սեւաւոր, իգական սեռի համար։ (6) Ժուռ կը նշանակէ խակ, տհաս. կուճոպաժռ, կճեպն և ճիւղերն ջարդուելով քաղուած պտուղ։ Այս անէծք արական սեռի համար կը գործածուի։ (7) Իգական սեռի համար կը գործածուի։ (8) Նոր, թարմ. Թրքերէն՝ Թազէ։ (9) Թաւալգլոր լինելով մեռնելիք։ (10) Հող։ (11) Վրայ։ Վանցիների բարբառին մէջ նախադրութիւնները խնդիրներէն առաջ կը դրուին։ (12) Գլուխ։ (13) Գլուխ։

ԲԱՌԱՐԱՆ (վանի բարբառին)

1. Ա.ԿԻՒԿԻԼ. Փուչի կամ մի տեղի կըպչիլ, կառչիլ մարմնի մի մասովը։ (Թրքերէն իլիշմէք)։ Տեսնել նաև Վ.Ի.Վ.Իլ բառը։

2. Դ.ՈՂ.ՏԱՔՑՈՑ. Ջերմ հիւանդութիւնն որ նախ կը դողցունէ և յետոյ տաքութիւն կը բերէ։

3. Թ.ԱՓԱՌՈՍ Ա.ՈՒՆԵԼ. Ոտքը քարի կամ մի տեղի զարնուելով գլորիլ և իյնալ։

4. Խ.ՈՒՆՑԱՒ. Հարբուխ։ Վանի մէջ խռնցաւ կասեն երբ ռնգունքի լորձային թաղանթը գրգռուելով ջուր կը վազէ ըստէպ. իսկ ճ.ՀՎԱՓԻլ կասեն երբ լինաերն ու ատամները բորբոքելով կը ցաւին և միանգամայն գլխացաւ կը պատճառեն, առանց քթէն ջուր վազելու։

5. Կ.ՈՒԹԱԼ. Ստամոքսին մէջ դիզուած կազերը դէպի վեր գալով անախորժելի և կոշտ ձայնով, անյօդելի մի հնչումով բերնէն դուրս ելնելը քամիի նման։ Այս բառ Ֆրանսերէն roter կը թարգմանուի։

6. ԿՄՈՒՆԵՔ ԹՈՒՆԵԼ. Ջուր խմած և փիլաւ նման բան կերած ժամանակ, մի կաթիլ կամ մի հատիկ կոկորդին մէջ երթալ և հազալով դուրս տալը։

7. ՄԱ.ԹԵԼ. Եփել. սա տարբերութեամբ որ մաժել կը նշանակէ «մատներն մի մարմնի վրայ կամաց կամաց քսելով քաշել»։ Խեղաթիւրելը մարմնին վնասուած տեղը չփելու համար կը մաժէ. իսկ ձեռքերն տաքցունելու համար իւար կը շըփեն և ոչ թէ կը մաժեն։

8. ՍԿՈՒՏԱԼ. Ստամոքսին չլամգային չարժումով կծկուիլը որով մի տեսակ կոշտ և անյօդելի ձայն կելնէ հագագէն։ Սովորապէս այդ գործողութիւն կը կրկնուի անդադար մինչեւ որ ջուր խմելով կամ կռնակին մի քանի թեթեւ հարուած տալով անցնի։ Այս բառին տեղ Կ. Պոլսեցիներ կը գործածեն կլիկ ընել. ֆրանսերէնն է avoir le hoquet։

9. Վ.ՒՎԻԼ. Տեղ մը խնալ և ամբողջ մարմնովը հոն բռնուիլ, այնպէս որ դըժար լինի դուրս ելնել այդտեղէ։ (Խիցը մի չիշի բերանին մէջ կը վռվի և ոչ թէ կակուղի)։

10. Վ.ԲՎՆՋԱԼ. Սաստիկ դողալ երեսալով և ատամները կաչկաչելով, որպէս կը պատահի դողտաքցոցի ատեն։

վախկոտը՝ ճանաչել. Թողնող իւր հայրենիքը և գաղթող օտար, աւելի օտար երկիրները. ատող սուրը իսկ սիրող խաչը։

Երբ նա աչքը բաց է անում, գըտնում է մեզ իրենից վախեցող և սարսափող, իրեն հնազանդող և միևնոյն անգամ սարկացող. մի խօսքով մեր բոլոր ունեցածին տէր է ճանաչում իրեն և մեզ իրրև մոլեռւած և եւս ևս հաւ համարած՝ վատահ է որ երբ ուզէ, պիտի ուտէ։

Երբ նա օսմանեան կայսրութիւնը իրեն օդնական ունի և քրիստոնեայ կայսրութիւններէն էլ համակրող։

Երբ նա երկրի ամուր տեղերն է բռնած, իսկ մենք հարթ ու տափարակ դաշտերը։

Երբ նա չղթայ կապած կանգնած է մի որոշ հողի վրա, իսկ մենք հազարաւոր մտաբերի բաժանուած ցըրւած ենք աշխարհիս երեսին և ամենօրեայ մտածմունքներս է գնալ, հեռանալ հայրենիքից և բաժանուել ազգից։

Երբ նա կը տեսնէ որ մեր ղէմի զարկուն, մեզ կողոպտելուն և մեր իրաւունքները բռնաբարելուն դէմ, իրրեւ մեռած պիտի, չենք ուզում միևնոյն անգամ ձայն էլ հանել։

Ուրեմն կարելի՞ է որ քուրդ տարբը ուզէ մեզ հետ հաշտ և միաբան լինել։

Մեզանից ոմանք մտածում են որ եթէ Քրդերին փող տանք, նրանք չուտով մեզ հետ պիտի միանան. բայց բարեկա՛մ, Քուրդը երբէք չէ ուզում որ տանիս նրան փող տաս, որովհետև ինքը կարող է գալ և ձեռքիդ առնել տանել, մի քանի՛ հարուածներ գլխիդ ջնջեղով։ Մին էլ, եթէ հաց ունես, գու կեր և զաւակներիդ ու ազգակիցներիդ ուտեցրու։

Այո՛. քուրդ տարբը կուզէ աւելի մեզ հետ հաշտ և միաբան լինել քան թէ այսօրուայ օսմանեան կայսրութեան հետ, որովհետև նա հաւատացած է որ իւր համարին քրիստոնեայ Հայը աւելի հաւատարիմ է և յարատեւով՝ քան թուրք ազգը. բայց երբ մենք Հայերս դնէ նրան հաւատարմյժ ունենանք, սկսենք գիմադրել բռնակալին և միևնոյն անգամ իրեն, Քուրդին, այն ժամանակ իսկոյն պիտի միանայ մեզ հետ և ամենայն զէպքում մեզ հնազանդի։ Բնական է որ ամենայն ինչ զէպի գօրաւորը կողմն է դառնում, թէ լինի չնչաւոր և թէ անչունչ առարկայ։ Երբ պյժը ուժի հետ չփոխում է, կամ երկուսն էլ ոչնչացնում են, կամ երբ մէկը մի քիչ գօրաւոր է լինում, իսկոյն միւսին կամ ոչնչացնում է կամ միանում է։

Ուրեմն եկէք կշռենք մեր պյժերը և տեսնենք թէ ի՞նչպէս կարող ենք միանալ քուրդ տարբին հետ։ Իրաւ է որ երբ Քուրդը ունի միայն ուղղ, մենք էլ ունենք ուսում և քաղաքակրթութիւն. բայց պէտք է մտածել թէ մեր ունեցած քաղաքակրթութիւնն և ուսումը ո՞ր տեղում ունենք.—Հայաստանից դուրս շատ հեռու երկիրներում. Կ. Պոլսում, Թիֆլիսում, Վենետիկում, Մոսկովում և այնց պէս մեզ թւնամի քաղաքներում, որտեղերում ո՛չ Քուրդի սուր կայ և ո՛չ էլ հայենական, Հայաստանի խնդիրը կայ և մանաւանդ, մեզ հետ միաբանելու ուզող Քուրդը երբէք ո՛չ յիշում է և ո՛չ էլ նշանակութիւն է տալիս այն տեղերին ուր մենք ունենք քաղաքակրթութիւն, ուսում և հարստութիւն։ Ձկէզ է որ Քուրդը Հային Կ. Պոլսում ճանաչում է էֆէնտի, Բրիզում մօսիօ և Լօնտօնում մըստր ու Մոսկովում գոսպոդին, բայց Հայաստանում, Հայի օրրանում, Հային ճանաչում է միայն ֆըլա և իրեն ուզածը անում է իւր ֆըլային։ Ձկմաբիա է որ Կ. Պոլսի Հայութիւնը մեծ նշանակութիւն ունի Եւրոպայի աչքում, բայց աւելի մեծ նշանակութիւն ունի Հայաստանում բնակուղ քուրդ տարբը Եւրոպայի աչքում քան Կ. Պոլսի կամ Թիֆլիսի Հայութիւնը. ուրովհետև վերջինը զրաղուած է մըղթերով մուրալ, լալ ու ողբալ, իսկ առաջինը զրաղուած է իւր սրով սիրել, ծիծաղել ու խնդալ, նա էլ այն տեղերում ուր են մեր անձն, մարմինն, արիւնն, սիրտ և հոգին, միայն Հայութիւնն։

«Ինչ որ էլ լինի, անպատճառ պէտք է որ մենք քուրդ տարբին հետ հաշտենք, միաբանենք և կապակցութիւն հաստատենք», պիտի կրկնեն մեր բարեկամք։ Ես էլ կասեմ որ այո՛, պէտք է, բայց ո՞րը աւելի պէտք է, առաջ Քուրդերի հետ հաշտե՞նք, միաբանե՞նք և կապակցութիւն հաստատե՞նք, թէ մենք մեր մէջ. Հայը Հայի՞ հետ կապուի թէ Քուրդը Հայի հետ. Թիֆլիսը Մուշի հետ, Մուշը Վանի հետ, Վանը Կարնոյ հետ, Կարինը Ալաշկերտի, Ջէյթունը Կեղեկայի, Կ. Պոլսի և այլնի հետ հաշտուի, միանա՞յ և կապուի թէ քուրդ տարբի հետ. Առաջը սուսմ է. Ցնում իւր գլուխը զարդարել չմացողը գնում է հարսանիք որ նոր հարսի գլուխը զարդարէ։ Երբ մենք իրարից բաժանուած, մաս մաս եղած միացել ենք այստեղ ու այնտեղ, առանց տեղեակ լինելու իրար վիճակից, կեանքից և ուժից, առանց մտածելու թէ ինչ միջոցներով պէտք է միանանք և կապուենք իրար հետ, առանց մեր գաւառացի ժողովուրդին, Հայաստանի պահապաններին համակրելու, նրանց թշուառ վիճակը ուսումնասիրելու, գարման մտածելու և միջոցներ ձեռք առնելու, ուզում ենք որ քուրդ տարբին հետ միանանք։

Տեսէ՛ք, կարելի՞ է։

ԱՆՆԻԲԱԼ

Վ.Ե.Հ. ՄՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Վ.Հ. Խրիմեան Հայրիկ Երուսաղէմի մէջ իրրեւ ուխտաւոր մնացած միջոցին իր Հրաշիրակ երկրին Աւետեացի Բ տպագրութիւնը հրատարակել զաս, Պապիկ և Թոռնիկ անուն մի նոր գիրք ալ պատրաստած է որի մէջ մեծ հայրէն (պապիկ) ասածդուսած խրատներ կան։

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՒ ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

«Կարս» ասուերէն լրագիրը կը հրատարակէ թէ կարսի նահանգապետը մի ծանուցագրով հաղորդած է բարձրագոյն իշխանութեան թէ Հայերի վարժարանները ընդհանրապէս հակառուղջական և անյարմար կերպով չինուած են, թէ ռուս լեզուի դասախօսութիւնը շատ անկանոն կերպով կը լինի հայ վարժարաններին մէջ և թէ կան հայ վարժարաններ ուր մինչեւ անգամ չեն ուզեր դասախօսել պետական ռուսերէն լեզուն։

Կովկասեան ուսումնարանական շրջանի ռուս Հոգաբարձուն յայտարարել է այդ առթով որ թէև այդ ծանուցագրի մի քանի կէտերը ճիշդ են, բայց ինք չէ կարող որոշ կերպով ասել թէ որչափ ճշմարիտ և իրական են անոր մէջ գրուածները որովհետև ինք ի պաշտօնէ տեղեկութիւններ կը ստանայ հայ դպրոցների ուսումնական մասին վրայ միայն, իսկ այդ դպրոցների վարչական մասին խուսնուելու իրաւունք տրուած չէ իրեն։

Հանրային կրթութեան նախարար Կոմս Դէլիանեանց առաջարկեր է Կովկասի բարձր իշխանութեան որ հարկ եղած կարգադրութիւններն անելով կովկասեան նահանգապետներին միջոցով ճիշդ և որոշ տեղեկութիւններ ստանայ յիշեալ ծանուցագրին մէջ նշանակուած կէտերին նկատմամբ որ ըստ այնմ հարկ եղածը տնօրինուի։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ատրպատականի հանգուցեալ Առաջնորդ Այիքազունդրապօլցի Գեր. Մխիթարեան եպիսկոպոսի մասին կը կարդանք Ս. Էջմիածնի ԱՐԱՐԱՏ պաշտօնական ամսաթերթի օգոստոսի թուին մէջ հետեւեալ մահագուցակը.

Ամսոյս 2(14)ին խօլերայից բռնուելով, կնքեց իւր մահկանացուն Ատրպատականի Առաջնորդ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԸ 47 տարեկան հասակում։ Հանգուցեալը ժառանգաւորաց դպրոցի լաւ աշակերտներից էր։ Մխաան եղաւ 1857 թուին։ 1863ին ձեռնադրուեց Սարկաւագ, իսկ մի տարուց յետոյ Վարդապետ։ 1863-1866ը եղել է անդամ վանական կառավարութեան։ 1866-1867 թ. վարել է Բայազիտի գործակալի պաշտօն, իսկ 1867 թ. նորից նշանակուեց վանական կառավարութեան անդամ և մի տարուց յետոյ առաջաւ Ծայրագոյն Վարդապետութիւն։ 1869ին ուղարկուեց Տաթեւի վանքը՝ իբրեւ վանահայր և յաղորդ, ուր մնաց մինչեւ 1872 թ.։ Ապա կարգուեցաւ քննիչ Բիւնեւի կալուածական գործերի և հաշիւների և 1877ից մինչեւ 1879 թ. վարեց նոյն կալուածների կառավարչի պաշտօնը։ 1882 թուի մայիսի 9ին Երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսից ձեռնադրուեց եպիսկոպոս, իսկ 1886 թ. մայիսի 14ին հանգուցեալ Մակար կաթողիկոսը նշանակեց Նրան առաջնորդ Ատրպատականի թեմի, որպիսի պաշտօն և վարում էր մինչեւ մահը։ Հանգուցեալը պարգեւատրուած էր ծաղկեայ վիրօնով, վարդապետական լանջախաչով և եպիսկոպոսական պիտակով. թողել է մի քանի գրաւոր աշխատութիւններ։

Մաղթենք Ատրպէնին, որ հանդուցելոյն երկնային արքայութիւն պարգեւէ։

ՊԱՐՍԿԱ-ՀՆԴԿԱԿԱՆ ԹԵՄԻ ՀԱՅՑԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԻՆ ՎԷՃԵՐԸ

Էջմիածնի Ատրատ ամսաթերթի օգոստոսի թուին մէջ կը կարդանք հետեւեալը որ քաղուած է Սիւնեաց օրագրութիւններէն.

Օգոստոս 14. Սիւնեաց լսելով Հնդկաստանի և Զէյրաւու Հայոց եկեղեցիների երեսփոխան Թովմաս Մելքոնեանցի, Հնդկաստանցի Խաչակիր Յովհաննէս ս. քահանայ Խաչիկեանի, Նոր-Ջուղայի Հայ ժողովրդոց և Պարսկաստանի ու Հնդկաստանի Առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի բողոքները, որոնք գանգատում էին իրարուց գանազան տեսակ անկարգութեանց համար, հասու եղաւ, որ այս բողոքները իւրեանց էութեամբ չեն ընկնում իւր իրաւասութեան ներքոյ, որովհետեւ Սիւնեաց չի մէջտառում Տահկաստանի և Պարսկաստանի Հայերի ներքին հոգեւոր գործերում. և մանաւանդ այն Առաջնորդը, որից բողոքաւոր էին եղել, արդէն փոխադրուել է այն վիճակից, ուստի Հրամայեց այդ բողոքները Սիւնեաց մէջ կարճել և բողոքաւորներին ծանուցանել Հնդկաստանի և Պարսկաստանի Առաջնորդ Գեր. Եպ. եպիսկոպոսի ձեռքով, որ այսուհետեւ իրեանց դատերին և պահանջներին բաւականութիւն տալու համար չդիմեն Սիւնեաց, այլ իրեանց Առաջնորդին կամ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։

ՔԱՆԱՆԵԱՆՑ Ի Կ. ՊՕԼԻՍ

Սրեւեզքի սեպտ. 11/23ի թուին մէջ կը կարդանք հետեւեալը.

«Մոսկուայի Լազարեան Ճեմարանին տեսուչ Պ. Գէորգ Քանանեանց, իր կինն ու աղջիկն, ընկերակցութեամբ Յովհաննէս էֆէնեան Թորամանի, երեկ այցելեցին Ազգային Կեդրոնական վարժարանն։ Թեամանլութեան անդամ և վարժարանին տնօրէն Յարութիւն էֆէնեան Մոսկովեան արժանավայել ընդունելութիւն ըրաւ ռուսահայ հիւրերուն։ Պ. Քանանեանց ամբողջ չենքը պատեցաւ, դասախօսութեանց ներկայ գտնուեցաւ և աչքէ անցուց բնակարանն։ Վարժարանին ծրագիրը քննեց և իր զարմացումն յայտնեց այդքան կարճ ժամանակի մէջ վարժարանին ըրած յառաջդիմութեան վրայ։

«Պ. և Տիկին Քանանեանց և Օր. Քանանեանց այցելեցին նաև Բերայի ազգկանց Արուեստագիտական Ուսումնարանն, որուն բոլոր մասերն աչքէ անցուելով, մեծապէս գոհ մնացին, մանաւանդ սանուհեաց ճարտարարուեստ ձեռագործներէն։

«Լազարեան Ճեմարանի յարդելի անօրէնն վաղը ընտանեօք Նիկոմիդիա կուգնուրի, Ամսոյս ութին առթիւ մէկ երկու օր անդ մնալու համար։»

Բերայի Հայոց թատրոնի պատուիրը

Կ. Պոլսէն կը հաղորդեն որ Բերայի մէջ Հայերի ունեցած Նոր Թատրոնի չքեղ շէնքը որ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածն էր և տարեկան 1000 ոսկի եկամուտ կը բերէր, չվճարելը ինչ կերպով կրակ առնը և պրեմէ ամբողջովին այրեր է։ Թէև

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության մասին

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության հարցը, որ այսօր օրակարգի վրա է դրված, ամենակարևոր հարցերից մեկն է մեր ներքին կյանքում։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերը մեր ազգային կյանքի ամենաբարձր ատյանն են։ Այդ նիստերում է, որ ազգը իր ներկայացուցիչների միջոցով քննում է իր ամենամեծ գործերը, որոշում է իր ճակատագրական ուղիները։ Ուստի շատ կարևոր է, որ այդ նիստերում ներկայացված լինեն ազգի բոլոր կենսական ուժերը։

Ներկայացուցչական կազմակերպության հարցում մենք պետք է հետևենք երկու հիմնական սկզբունքների։ Առաջին սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի համամասնական։ Այսինքն՝ ամեն մի կուսակցություն կամ խումբ ունենա այնքան ներկայացուցիչ, որքան ընտրողներ ունի։ Եթե մի կուսակցություն ունի 10 հազար ընտրող, իսկ մյուսը՝ 5 հազար, ապա առաջինը պետք է ունենա երկու անգամ ավելի ներկայացուցիչ, քան երկրորդը։ Այս սկզբունքը ապահովում է արդարություն և թույլ չի տալիս, որ փոքրամասնությունը ճնշի մեծամասնությանը։

Երկրորդ սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի ֆունկցիոնալ։ Այսինքն՝ ազգի տարբեր ֆունկցիաները՝ տնտեսական, մշակութային, կրոնական, պետական, ունենան իրենց ներկայացուցիչները։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերում պետք է լինեն գյուղացիության, բանվորության, մտավորականության, հոգևորականության, զինվորականության, պետական ծառայողների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ։ Միայն այդ դեպքում ազգային ժողովը կարող է իսկապես ազգի ամբողջական արտահայտությունը լինել։

Ներկայացուցչական կազմակերպության հարցում մենք պետք է հետևենք երկու հիմնական սկզբունքների։ Առաջին սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի համամասնական։ Այսինքն՝ ամեն մի կուսակցություն կամ խումբ ունենա այնքան ներկայացուցիչ, որքան ընտրողներ ունի։ Եթե մի կուսակցություն ունի 10 հազար ընտրող, իսկ մյուսը՝ 5 հազար, ապա առաջինը պետք է ունենա երկու անգամ ավելի ներկայացուցիչ, քան երկրորդը։ Այս սկզբունքը ապահովում է արդարություն և թույլ չի տալիս, որ փոքրամասնությունը ճնշի մեծամասնությանը։

Երկրորդ սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի ֆունկցիոնալ։ Այսինքն՝ ազգի տարբեր ֆունկցիաները՝ տնտեսական, մշակութային, կրոնական, պետական, ունենան իրենց ներկայացուցիչները։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերում պետք է լինեն գյուղացիության, բանվորության, մտավորականության, հոգևորականության, զինվորականության, պետական ծառայողների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ։ Միայն այդ դեպքում ազգային ժողովը կարող է իսկապես ազգի ամբողջական արտահայտությունը լինել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության մասին

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության հարցը, որ այսօր օրակարգի վրա է դրված, ամենակարևոր հարցերից մեկն է մեր ներքին կյանքում։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերը մեր ազգային կյանքի ամենաբարձր ատյանն են։ Այդ նիստերում է, որ ազգը իր ներկայացուցիչների միջոցով քննում է իր ամենամեծ գործերը, որոշում է իր ճակատագրական ուղիները։ Ուստի շատ կարևոր է, որ այդ նիստերում ներկայացված լինեն ազգի բոլոր կենսական ուժերը։

Ներկայացուցչական կազմակերպության հարցում մենք պետք է հետևենք երկու հիմնական սկզբունքների։ Առաջին սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի համամասնական։ Այսինքն՝ ամեն մի կուսակցություն կամ խումբ ունենա այնքան ներկայացուցիչ, որքան ընտրողներ ունի։ Եթե մի կուսակցություն ունի 10 հազար ընտրող, իսկ մյուսը՝ 5 հազար, ապա առաջինը պետք է ունենա երկու անգամ ավելի ներկայացուցիչ, քան երկրորդը։ Այս սկզբունքը ապահովում է արդարություն և թույլ չի տալիս, որ փոքրամասնությունը ճնշի մեծամասնությանը։

Երկրորդ սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի ֆունկցիոնալ։ Այսինքն՝ ազգի տարբեր ֆունկցիաները՝ տնտեսական, մշակութային, կրոնական, պետական, ունենան իրենց ներկայացուցիչները։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերում պետք է լինեն գյուղացիության, բանվորության, մտավորականության, հոգևորականության, զինվորականության, պետական ծառայողների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ։ Միայն այդ դեպքում ազգային ժողովը կարող է իսկապես ազգի ամբողջական արտահայտությունը լինել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության մասին

Ազգային ժողովի ընդհանուր նիստերի ներկայացուցչական կազմակերպության հարցը, որ այսօր օրակարգի վրա է դրված, ամենակարևոր հարցերից մեկն է մեր ներքին կյանքում։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերը մեր ազգային կյանքի ամենաբարձր ատյանն են։ Այդ նիստերում է, որ ազգը իր ներկայացուցիչների միջոցով քննում է իր ամենամեծ գործերը, որոշում է իր ճակատագրական ուղիները։ Ուստի շատ կարևոր է, որ այդ նիստերում ներկայացված լինեն ազգի բոլոր կենսական ուժերը։

Ներկայացուցչական կազմակերպության հարցում մենք պետք է հետևենք երկու հիմնական սկզբունքների։ Առաջին սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի համամասնական։ Այսինքն՝ ամեն մի կուսակցություն կամ խումբ ունենա այնքան ներկայացուցիչ, որքան ընտրողներ ունի։ Եթե մի կուսակցություն ունի 10 հազար ընտրող, իսկ մյուսը՝ 5 հազար, ապա առաջինը պետք է ունենա երկու անգամ ավելի ներկայացուցիչ, քան երկրորդը։ Այս սկզբունքը ապահովում է արդարություն և թույլ չի տալիս, որ փոքրամասնությունը ճնշի մեծամասնությանը։

Երկրորդ սկզբունքը պահանջում է, որ ներկայացուցչությունը լինի ֆունկցիոնալ։ Այսինքն՝ ազգի տարբեր ֆունկցիաները՝ տնտեսական, մշակութային, կրոնական, պետական, ունենան իրենց ներկայացուցիչները։ Ազգային ժողովի ընդհանուր նիստերում պետք է լինեն գյուղացիության, բանվորության, մտավորականության, հոգևորականության, զինվորականության, պետական ծառայողների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ։ Միայն այդ դեպքում ազգային ժողովը կարող է իսկապես ազգի ամբողջական արտահայտությունը լինել։

կաղմելով վաճառանոցների սորոնա-յարկները կտևց և շատ ապրանքներ վճացուց. կառքեր իսկ տեղ տեղ ընդ-հատեցին իրենց երթեւեկ. մի քանի մարդիկ ալ քիչ մնաց որ հեղեղէն քշուելով խեղդուէին։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Կ. Պոլսէն հոկտ. 1 թուով կը հեռագրեն հետեւեալը. «Կը հաւատան թէ Լոնտոնի օսմանեան դեսպան Րիւթիմ փաշան սեպտ. 20ին Եգիպտոսի մասին կարեւոր մի յայտարարութիւն պրած է լորա Ռոզպերիի. Տրըմմընա Ալօվի դաշնագրի վրայ մի համաձայնութեան մասին լինելու է այդ յայտարարութիւն։ 1887ին հինուած այդ դաշնագրի տրամադրութիւնները, ինչպէս յայտնի է, հետեւեալներն են.

«Եգիպտոսի ինքնավարութիւնը Սուլթանի դերիշխանութեան տակ. ընդունի այն դաշնագրութիւնների օրոնք իրաւունք կուտան օտարականների իրենց հիւպատոսներէ միայն դատուելու. Եգիպտոսի չեզոքացումը, այն կերպով որ կարելի լինի զօրք անցուցանել ջրանցքէն ինչպէս և ցամաքէն. Եգիպտական բանակի սպաների մեծ մասը Անգլիացի լինին և Անգլիոյ կողմէն նշանակուին. Անգլիային իրաւունք տրուի երկիրը վերստին գրաւել երբ մի խռովութիւն ծագի. Անգլիական բանակը երեք տարուան պայմանաժամի մէջ երկրէն դուրս ելնէ եթէ մինչեւ այն ատեն երկիրը սեւէ ներքին կամ արտաքին մի վտանգի չենթարկուի. Անգլիան իրեն վերապահէ նաեւ այն իրաւունք որով վտանգի առաջին նշանին վրայ իր զօրքեր կարենայ դարձեալ զրկել Եգիպտոս։

ԲՕԼԷՐԱ.

Թէհրանէն օգոստ. 27/8 սեպտ.ին կը գրեն մեզ.

«Բոլերան Թէհրանումն սաստիկ կոտորած է արած, բայց այժմ պակասել է։ Կոտորածն այն աստիճան սաստիկ եղաւ որ օգոստ. 8/20ին մեռնողների թիւն 1000 էր. իսկ բոլոր քոլէրայէց մեռնողների թիւն 15,000 հոգի են միայն Թէհրանումն, և բաց առեալ ամառանոցներն որ փոքրիկ մի գիւղի մէջ 160–180 հոգի էին մեռնում։ Մեռնողների թիւն չպիտի հասնէր այս քանակութեան եթէ մրգեղէնի գործածելը սակաւ նուազ կամ երբեք չլինէր։ Բոլերայով մեռած հաւերի թիւն հազիւ 30–40 է, որոնցէց շատերը երկիւղէց էին մեռնում. քոլէրան Թէհրանումն մնալուց առաջ Հայերս քաշուած էինք ամառանոց։

—կարծուէն կը հաղորդեն որ Բասէն գաւառակի մէկ քանի գիւղերին մէջ քոլէրան ճարակած է։

— փարիզի մէջ քոլէրան կայուն վիճակ մ'ունի. զգալի մի բարւոքում չերեւիր տակաւին։ Հաւերի մէջ հոկտ. 1ին 2 դէպք միայն պատահեր է և 3 մահ. այնպէս որ կարելի է քոլէրան այդ քաղաքի համար վերջացած համարել։ Համպուրգի մէջ զոհերի թիւը տասն անդամ պակսեր է, 2 օր առաջ 43 դէպք և 21 մահ միայն պատահեր է։ Ռուսիոյ առողջական տեղեկութիւնները քոլէրան աւելի ընդարձակ կը գառնայ. արդէն մոտաւորապէս Պետերբուրգի մէջ։

ՓՕԼԷՐԱԻ ՊԱՏՈՒԱՍՏԸ

Նիժ-Նովրք Հէրըլտ լրագրին Թըղթակից Պր. Սթանհօփ որ, ինչպէս յայտնի է, իր վրայ քոլէրայի պատուաստին փորձն անել տուեր էր և անկէ ետք Համպուրգ պիտի երթար, դըժնացեր է արդէն այդ քաղաք և քոլէրաէ բռնուած հիւանդների հիւանդանոցը մտնելով ինքզինք վարակման ամեն վտանգի ենթարկեր է, թէ հիւանդների խմած դաւաթէն խմեր է և թէ անոնց պառկած անկողիններին մէջ պառկեր է։

Այժմ, սեպտ. 29 թուով կը հեռագրեն որ Պր. Սթանհօփ ողջ առողջ դուրս կելնէ քարանթինայէն և փարիզ պիտի վերադառնայ։ Ամեն կողմէ ղինք տեսնելու վազող անձերին յայտարարեր է յանդուգն թղթակիցը թէ Տքթ. Հաֆքինի պատուաստը քոլէրայի դէմ արդելիչ միջոց մ'է։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Փաքէի չոգենաւները կը մեկնին Մարսէյլէն ի Սամսոն ամեն 14 օր մի անգամ, չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամ 4ին։

Մեկնելու օրերը՝

Հոկտեմբերի	12	և 26
Նոյեմբերի	9	և 23
Դեկտեմբերի	7	և 21

Հետեւեալ գիրքերն կարելի է առանալ Ամէնիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐ ԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿՆՆՁԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲՈՒՊՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրական նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 անթմ.) 1 ֆր. 50 սթմ։

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։) Գին (90 անթմ.) 1 ֆրանք 20 անթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց ուսմունք (Մեծ անուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 անթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԻՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղարանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչների թիւին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն ոմանք 30ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ութ ծալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 անթմ) ,20 անթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՅԱՐԻՍ (Ծաւնատաւնի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ծայներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Իսաւէրտենց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մեկտեղ)։ Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներուն անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին՝ 5 ֆր.։ (1 տոլար ամերիկեան)։

Նշանակք Հայաստանեայց. Մ'այլ Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մեկտեղ վայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած, 1 ֆրանք։

ՊԱՐԳԵՒ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Արմենիայի ներկայ 8րդ տարեշրջանի սկզբէն մինչեւ վերջ (1892 օգոստոս — 1893 յուլիս) կանոնաւորապէս բաժնորդ լինելով՝ իր բաժնորդագրին կանխիկ վճարողներէն համար վիճակ պիտի ձգուի և 4 պարգեւ պիտի բաշխուի իրենց։ Անոնք որ վեց ամսէ վեց ամիս կամ երեք ամսէ երեք ամիս ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ 8րդ տարեշրջանի բաժնորդագրիները վճարած կը լինին ամբողջապէս, նոյնպէս իրաւունք կունենան այդ պարգեւի վիճակախաղին մասնակցելու, իրրեւ ամբողջ տարեկանը կանխիկ վճարածներ։ Այդպէս մաս առ մաս ամբողջ տարեկանը վճարողները իրենց վերջին վճարանայի (1893 փետրուար — 93 յուլիս) կամ վերջին եռամսեայի (1893 մայիս—յուլիս) վճարքին առտյապրին վրայ տպագրուած թուով կը մասնակցին վիճակախաղին։ Անոնք որ 8րդ տարեշրջանի տարեկան բաժնորդագինը ամբողջապէս վճարած չեն դեռ վիճակախաղը կատարուելիք ժամանակ, բնականապէս կը զրկուին պարգեւին մասնակցելու ունէ իրաւունքէ որովհետեւ իւրաքանչիւր բաժնորդ պէտք է դիտէ թէ իւր ամբողջ տարեկան կամ տարեկանը լրացնող բաժնորդագրութեան տատյապրի թիւը այն 4 թիւերէ մի՞ն է որոնք վերոյշեալ պարգեւներէ մին չհասած կը լինին։

Զորս պարգեւ պիտի բաշխուի ամբողջ բաժնորդներէն 4ին որոնց որ թիւը եղնէ վիճակախաղին կատարուած առաջին առաջին անդամ քաշուած առն, որ բաժնորդի որ տատյապրի թիւը եղնէ, նա պիտի տանայ Արմենիայի խմբագիր–տնօրէնէն 400 ֆրանք. երկրորդ անդամ քաշուած առն, եթէ տատյապրի թիւն ասոր թիւը պիտի տանայ 300 ֆրանք. երրորդինը՝ 200 ֆրանք և չորրորդինը 100 ֆրանք։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
Մ ԱՐՄԷՆԻԱ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie
Allées de Meilhan, 44.